ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

Երևան **06.11.2020**

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) ղեկավարի կողմից բարձրացված՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ստուգումների ստուգաթերթերին ԱԱՏՄ կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից հավանություն տալու վերաբերյալ հարցը Խորհրդի նախագահ Զ. Բաթոյանի առաջարկով որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի նոյեմբերի 5-ին և ավարտվել 2020 թվականի նոյեմբերի 6-ին:

Քվեարկության նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Հարց՝

1. Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Զ. Բաթոյան - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

Քվեարկությանը չեն մասնակցել՝

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

Քվեարկությունը համարվում է կայացած:

Քվեարկության արդյունքում.

1) Զ. Բաթոյանը քվեարկեց կողմ,
2) Լ. Նանուշյանը քվեարկեց կողմ,
3) Ա. Ասոյանը քվեարկեց կողմ,
4) Ա. Ավանեսյանը քվեարկեց կողմ,
5) Ք. Գրիգորյանը քվեարկեց կողմ,
6) Կ. Բրուտյանը քվեարկեց կողմ,
7) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության արդյունքը՝ 7 կողմ, 0 դեմ:

Խորհրդի անդամներից 3-ը չեն քվեարկել:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 718-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

11/16/2020

X

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: BATOYAN ZARUHI 7909790279 **Զ. ԲԱԹՈՅԱՆ**

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**